

Luys Lnyu®



ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԸ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՆՈՅԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ




ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ	1
1.1. Արդյունաբերություն.....	2
1.2. Շինարարություն.....	3
1.3. Ծառայություններ	4
1.4. Առևտուր.....	5
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ	5
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ	8
4. ՓՈԽԱՐԺԵՔ	9
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ	10
5.1. Բյուջեի եկամուտները	10
5.2. Բյուջեի ծախսերը.....	12
5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը	13
5.4. Պետական պարտք	13
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ	14
6.1. Գնաճ	14
7. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ	15
8. ԱՄՓՈՓՈՒՄ	16

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

Վերջին ամիսներին տնտեսական ակտիվության ցուցանիշի (ՏԱՑ-ի) դանդաղող տեմպը փոխարինվել է կտրուկ աճով՝ հիմնականում պայմանավորված արդյունաբերության աճի արագացմամբ, ինչպես նաև բազայի էֆեկտով: Այսպես, 2021թ. նոյեմբերին ՏԱՑ-ը կազմել է 13.2%՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով շուրջ 9.4 տոկոսային կետով: Արդյունքում ընթացիկ տարվա հունվար-նոյեմբեր ամիսների ՏԱՑ-ը նույնպես արագացել է՝ կազմելով 5.2%: Այնուամենայնիվ, տնտեսության վերականգնման տեսանկյունից ՏԱՑ-ի արագացումը բավարար չի եղել, քանի որ նախորդ տարվա անկման ցուցանիշը բացարձակ արժեքով ավելի մեծ է, ինչը նշանակում է, որ 2021թ. թողարկումն իրական արտահայտությամբ ցածր է 2019թ. նույն ամիսների ցուցանիշից շուրջ 2.6%-ով:


Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %



2021թ. հունվար-նոյեմբեր ամիսների ՏԱՑ-ի 5.2% աճը պայմանավորված է առևտրի և ծառայությունների ոլորտներում տնտեսական ակտիվության աճով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 2.9 և 1.6 տոկոսային կետ: Արդյունաբերության նպաստումը զգալիորեն արագացել է նախորդ ամսվա համեմատ՝ 0.3-ից դառնալով 0.7 տոկոսային կետ, ինչը հավանաբար պայմանավորված է հանքարդյունաբերության ոլորտի վերականգնմամբ¹: Շինարարության ոլորտը նույնպես ունեցել է դրական նպաստում ՏԱՑ-ին՝ շուրջ 0.4 տոկոսային կետով, մինչդեռ այլ ոլորտները, ներառյալ՝ գյուղատնտեսությունը, ունեցել են բացասական նպաստում:


¹ Առավել մանրամասն տեղեկատվություն հասանելի կլինի 2021թ. հունվար-նոյեմբեր ամիսների սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ վիճակագրական տեղեկագրում:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2021թ. հունվար-նոյեմբեր ամիսներին, տոկոսային կետ



1.1. Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %




Արդյունաբերության ոլորտում օգոստոս-սեպտեմբեր ամիսներին արձանագրված անկումներից հետո հոկտեմբերին արձանագրվել է աճ, իսկ նոյեմբերին այն կտրուկ արագացել է՝ կազմելով 15.7%: Արդյունքում հունվար-նոյեմբեր ամիսների ՏԱՅ-ը կազմել է 2.7%՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 1.6 տոկոսային կետով: Արդյունաբերության արագացումը հավանաբար կապված է հանքարդյունաբերության վերականգնմամբ: Այդ ոլորտում 2021թ. օգոստոս և սեպտեմբեր ամիսներին գրանցվել էր անկում՝ կապված պետական քաղաքականության հետ, մասնավորապես՝ հանքարդյունաբերության արտադրանքի արտահանման տուրքի ներդրման և ոլորտի կազմակերպություններում անհարկի ստուգումների հետ: Սակայն, նշված

խնդիրների ազդեցությունները, ըստ երևույթին, մեղմվել են և հանքարդյունաբերությունը սկսել է վերականգնվել:

2021թ. հունվար-հոկտեմբեր ամիսների տվյալներով² արդյունաբերության 3.9% աճը մեծամասամբ պայմանավորված է եղել «Էլեկտրաէներգիա, գազի և գոլորշու մատակարարում» ճյուղի աճով, որի նպաստումը կազմել է 1.0 տոկոսային կետ: Մշակող արդյունաբերության նպաստումը եղել է շատ փոքր դրական՝ 0.1 տոկոսային կետ, իսկ հանքարդյունաբերությունը ունեցել է բացասական նպաստում ընդհանուր արդյունաբերության աճին՝ 0.1 տոկոսային կետով, որը, սակայն, մեղմվել է նախորդ ամսվա գրեթե զրոյական նպաստման համեմատ: «Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ճյուղն ունեցել է դրական նպաստում ընդհանուր արդյունաբերությանը՝ շուրջ 0.1 տոկոսային կետով:

1.2. Շինարարություն

Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %




Շինարարության ոլորտում նույնպես գրանցվել է աճի արագացում: Շինարարության ծավալների 12-ամսյա աճը նույնաթիվին արագացել է նախորդ ամսվա համեմատ շուրջ 7.2 տոկոսային կետով՝ կազմելով 10.8%: Հունվար-նոյեմբեր ամիսների աճը նույնպես արագացել է՝ կազմելով 6.9%, սակայն 2019թ. համեմատ շինարարության իրական ծավալը դեռևս ցածր է մնում՝ շուրջ 5.0%-ով:

² Արդյունաբերության կառուցվածքը 2021թ. հունվար-նոյեմբեր ամիսների համար դեռևս չի հրապարակվել:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %



Ծառայությունների ոլորտում աճի տեմպն արագացել է: 2021թ. նոյեմբերին ծառայությունների աճը կազմել է 16.9%՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով շուրջ 2.3 տոկոսային կետով: Այս արագացումը կապված է նախորդ տարվա նոյեմբերի ծառայությունների ցածր ծավալով, ինչը պայմանավորված էր այդ ժամանակահատվածում բացասական իրադարձություններով և դրանց հետևանքներով: Հունվար-նոյեմբեր ամիսներին ծառայությունների աճը կազմել է 7.3%՝ նախորդ ամսվա կուտակային աճի համեմատ արագանալով 0.9 տոկոսային կետով: Այս արագացումը նույնպես պայմանավորված է բազայի էֆեկտով, քանի որ անցած տարի տեղի էր ունեցել շուրջ 0.6 տոկոսային կետով անկման խորացում:

2019թ. նույն ժամանակահատվածի համեմատ, 2021թ. հունվար-նոյեմբեր ամիսներին ծառայությունների ոլորտը գրանցել է անկում՝ շուրջ 7.5%-ով:


Հունվար-հոկտեմբեր ամիսների տվյալներով³ ծառայությունների աճը կազմել է 6.4%, որին առավելապես նպաստել է «կացություն և հանրային սննդի կազմակերպում» ենթաճյուղի շուրջ 65.8% աճը (նպաստումը կազմել է 3.9 տոկոսային կետ): Ծառայությունների ոլորտի աճին շուրջ 7.5 տոկոսային կետով հակազդել է «մշակույթ, զվարճություններ և հանգիստ» ենթաճյուղի շուրջ 35.3% անկումը: Ծառայությունների մնացած ենթաճյուղերն ունեցել են դրական նպաստում, որոնցից առավել նշանակալի են եղել առողջապահության, տրանսպորտի, ինչպես նաև տեղեկատվության և կապի ենթաճյուղերի

³ Ծառայությունների կառուցվածքը 2021թ. հունվար-նոյեմբեր ամիսների համար դեռևս չի հրապարակվել:

նպաստումները, որոնք կազմել են համապատասխանաբար 2.2, 2.3 և 1.9 տոկոսային կետ:

1.4. Առևտուր


Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %



Առևտրի ոլորտում հոկտեմբերին գրանցված կտրուկ աճն ավելի է արագացել՝ հասնելով 15.7%-ի: Առևտրի աճի արագացումը նույնպես զգալի չափով պայմանավորված է բազայի էֆեկտով, քանի որ նախորդ տարի տեղի էր ունեցել անկման խորացում: Հունվար-հոկտեմբեր ամիսներին առևտրի աճը նույնպես արագացել է՝ կազմելով 7.9%, սակայն 2019թ. նույն ժամանակահատվածի համեմատ առևտրի ծավալները նվազել են 6.7%-ով:

2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճ, %



Ապրանքների արտահանման ծավալների աճը կտրուկ արագացել է նոյեմբերին՝ արտացոլելով մի կողմից՝ հանքարդյունաբերության ոլորտի վերականգնումը, մյուս կողմից՝ նախորդ տարվա խոր անկումը: 2021թ. նոյեմբերին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ ապրանքների արտահանման ծավալն աճել է 42.0%-ով, ինչը հավանաբար պայմանավորված է հանքարդյունաբերության աճով: Սակայն, միաժամանակ, նախորդ տարվա նոյեմբերին գրանցվել էր արտահանման 19.1% անկում՝ խորանալով շուրջ 17 տոկոսային կետով, ինչը նշանակում է, որ ընթացիկ տարվա հոկտեմբերի համեմատ արտահանման աճի 26.6% արագացման շուրջ 17 տոկոսային կետը բացատրվում է բազայի էֆեկտով: Հունվար-նոյեմբեր ամիսներին արտահանման ծավալների աճի տեմպը կազմել է 19.4%՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 2.4 տոկոսային կետով:


Հունվար-հոկտեմբեր ամիսների տվյալներով⁴ արտահանման 17.0% աճից 5.6 տոկոսային կետը պայմանավորված է եղել հանքահումքային արտադրանքի արտահանման շուրջ 16.7% աճով (ինչն էլ իր հերթին պայմանավորված է մետաղների միջազգային գների աճով): Արտահանմանը զգալի դրական նպաստում են ունեցել նաև «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի արտահանման ծավալների 60.4% աճը, որի նպաստումը կազմել է 5.3 տոկոսային կետ: Դրական նպաստող ապրանքախմբերի շարքում են եղել նաև «բուսական ծագման արտադրանք» և «պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբերի աճերը, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 2.2, 1.9 տոկոսային կետ:

Արտահանման աճին շարունակել են հակազդել «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» (անկումը՝ 17.3%) և «սարքեր և ապարատներ» (անկումը՝ 39.1%) ապրանքախմբերի արտահանման ծավալների անկումը, որոնք ընդհանուր արտահանման աճին հակազդել են համապատասխանաբար 2.6 և 0.7 տոկոսային կետով:

Արտահանման նախորդ ամիսների ցուցանիշները ՀՀ ՎԿ կողմից վերանայվել են, ինչի արդյունքում 0.1-0.2 տոկոսային կետով վատթարացել են հունվարից մինչև հունվար-սեպտեմբեր ամիսների կուտակային աճի ցուցանիշները, իսկ հունվար-հոկտեմբեր ամիսների ցուցանիշը բարելավվել է 0.1 տոկոսային կետով:

⁴ Արտահանման կառուցվածքը 2021թ. հունվար-նոյեմբեր ամիսների համար դեռևս չի հրապարակվել:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճ, %



Նոյեմբերին ներմուծման ծավալների աճի տեմպը շարունակել է արագանալ: 2021թ. նոյեմբերին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ ներմուծման ծավալներն աճել են 45.9%-ով՝ հոկտեմբերի համեմատ արագանալով 15.9 տոկոսային կետով: Հունվար-նոյեմբեր ամիսների ներմուծման աճը նույնպես արագացել է՝ կազմելով 15.1%, սակայն ներմուծման ծավալները դեռևս ցածր են մնացել 2019թ. նույն ամիսների ցուցանիշից՝ շուրջ 3.3%-ով:

2021թ. հունվար-հոկտեմբեր ամիսների տվյալներով⁵ ներմուծման ծավալների աճին զգալի նպաստում են ունեցել «հանքահումքային արտադրանք», «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» և «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» ապրանքախմբերի ներմուծման ծավալների աճերը, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 3.7, 2.2 և 1.5 տոկոսային կետ:


ՀՀ ՎԿ կողմից վերանայվել են նախորդ ամիսների ներմուծման ցուցանիշները, ինչի արդյունքում շուրջ 0.1-ից 0.2 տոկոսային կետով վատթարացել են հունվար-ապրիլից մինչև հունվար-հոկտեմբեր ամիսների կուտակային ցուցանիշները:

⁵ Ներմուծման կառուցվածքը 2021թ. հունվար-նոյեմբեր ամիսների համար դեռևս չի հրապարակվել:

3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

2021թ. հունվար-հոկտեմբեր ամիսներին միջին անվանական աշխատավարձերի աճը ցածր է եղել գնաճի տեմպից⁶: Միջին ամսական անվանական աշխատավարձն ընդհանուր տնտեսությունում հունվար-հոկտեմբեր ամիսներին նախորդ տարվա նույն ամիսների համեմատ աճել է 6.7%-ով՝ կազմելով 198,860.0 դրամ: Պետական հատվածում միջին աշխատավարձն աճել է 4.3%-ով և կազմել 172,603.0 դրամ, իսկ մասնավոր հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 7.6%-ով՝ կազմելով 211,181.0 դրամ:

Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը 2020-2021թթ. հունվար-հոկտեմբեր ամիսներին, %




Նույն ժամանակահատվածում ընդհանուր տնտեսությունում անվանական աշխատավարձի աճի տեմպը ավելի ցածր է եղել, քան գնաճի տեմպը (միջին գնաճը կազմել է 6.9%), ինչի պատճառով իրական աշխատավարձերը (գնաճով ճշգրտված աշխատավարձերը) նվազել են շուրջ 0.2%-ով:

⁶ ՀՀ ՎԿ կողմից դադարեցվել է հաշվետու ամսվա աշխատավարձերի ցուցանիշի հրապարակումը օպերատիվ տվյալների հրապարակման հետ միասին: Փոխարենը, աշխատավարձի տվյալները հրապարակվում են ավելի ուշ՝ հաշվետու ամսվա հաջորդող ամսվա վերջին աշխատանքային օրը:

4. ՓՈԽԱՐԺԵՔ

**Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը, %
(աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում)**



2021 թվականի հունիս-նոյեմբեր ամիսներին ՀՀ դրամի արժեզրկման տեմպը շարունակել է դանդաղել: Հունվար-նոյեմբերին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ ՀՀ դրամն արժեզրկվել է ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ, սակայն վերջին ամիսներին արժեզրկման տեմպը զգալիորեն դանդաղել է: Արժեզրկման չափը ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ կազմել է համապատասխանաբար 3.8% և 8.2%: ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամը շարունակում է մնալ արժեզրկված, որի չափը կազմել է շուրջ 1.2%:


Նոյեմբերի վերջի դրությամբ, նախորդ տարվա նույն օրվա համեմատ՝ ՀՀ դրամն արդեն արժևորվել է ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ համապատասխանաբար 4.6 և 8.5 տոկոսով, իսկ ՌԴ ռուբլու նկատմամբ արժեզրկման տեմպը մեղմվել է՝ կազմելով 0.9%:

5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

5.1. Բյուջեի եկամուտները

Պետական բյուջեի հարկային եկամուտների աճող տեմպը պահպանվել է նաև նոյեմբերին: Պետական բյուջեի հարկային եկամուտները 2021թ. հունվար-նոյեմբերին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 13.4%-ով՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 0.7 տոկոսային կետով:

Գծապատկեր 11. Հարկային եկամուտների կուտակային աճը, %



Հարկային եկամուտների աճը հունվար-նոյեմբեր ամիսներին հիմնականում պայմանավորված է եղել ԱԱՀ-ի (աճը՝ 17.1%), պետական տուրքի (աճը՝ 89.0%) և այլ հարկային եկամուտների (որոնց կազմում են ներառված դրոշմանիշային վճարները) գծով հարկային մուտքերի աճով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 5.8, 2.1 և 1.5 տոկոսային կետ: Հարկ է նշել, որ վերջիններս, մասնավորապես՝ պետական տուրքի և դրոշմանիշային վճարների աճերը, օրենսդրական փոփոխությունների արդյունք են, առանց որոնց հարկային եկամուտների աճի տեմպը նվազող կլիներ:


⁷ Պետական բյուջեի ցուցանիշների աճերի հաշվարկն իրականացվել է դրանց «հազար դրամներով» արտահայտված ցուցանիշների կիրառմամբ: Գծապատկերներում ներկայացված «մլրդ դրամ» արտահայտությամբ ցուցանիշների կիրառման դեպքում աճի ցուցանիշները կարող են փոքր-ինչ տարբեր լինել:

Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների

	2020թ. հունվար-նոյեմբեր		2021թ. հունվար-նոյեմբեր	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	-5.3	-5.3	13.4	13.4
ԱԱՀ	-3.2	-1.1	17.1	5.8
Շահութահարկ	-16.1	-1.9	6.7	0.7
Եկամտային հարկ	1.2	0.3	2.6	0.8
Ակցիզային հարկ	0.4	0.0	-10.7	-1.0
Շրջանառության հարկ	-8.4	-0.2	21.4	0.5
Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար	-7.4	-0.3	18.0	0.6
Մաքսատուրք	-29.2	-1.9	27.1	1.3
Սոցիալական վճար	31.1	0.4	75.7	1.4
Այլ հարկային եկամուտներ	16.4	0.2	84.7	1.5
Պետական տուրք	-26.6	-0.8	89.0	2.1

5.2. Բյուջեի ծախսերը⁸

Գծապատկեր 12. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ




Պետական բյուջեի ծախսերի աճի տեմպը շարունակել է դանդաղել: 2021թ. հունվար-հոկտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջեից իրականացվել է 1552.8 մլրդ դրամի ծախս, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածում կատարված ծախսերի նկատմամբ ավել է 6.8%-ով: Ծախսերի աճը պայմանավորված է ընթացիկ ծախսերի 8.8% աճով, իսկ կապիտալ ծախսերը նվազել են շուրջ 9.6%-ով: Կապիտալ ծախսերի նվազումը նույնպես պայմանավորված է բազայի էֆեկտով, քանի որ նախորդ տարվա հոկտեմբերին՝ Արցախյան պատերազմով պայմանավորված, կտրուկ աճել էին կապիտալ ծախսերը:

⁸ Պետական բյուջեի ծախսերը ներկայացված են հունվար-հոկտեմբեր ամիսների տվյալներով, քանի որ հունվար-նոյեմբեր ամիսների ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել:

5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը⁹

Գծապատկեր 13. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը (-), ժամանակահատվածի վերջի դրությամբ, մլրդ դրամ



Պետական բյուջեի պակասուրդը զգալիորեն աճել է: 2021թ. հոկտեմբերին պետական բյուջեի ծախսերը զգալիորեն գերազանցել են եկամուտներին, ինչի արդյունքում բյուջեի պակասուրդը մեծացել է ընդամենը 54.5 մլրդ դրամով: Սակայն, պակասուրդը ավելի փոքր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածում ձևավորված պակասուրդից շուրջ 3.9 մլրդ դրամով:


5.4. Պետական պարտք

2021թ. նոյեմբերի վերջի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 9,159.3 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նոյեմբերի նկատմամբ աճելով 15.2%-ով: Կառավարության պարտքը նույն ժամանակահատվածում նույնպես զգալիորեն աճել է, կազմելով 8,693.0 մլն ԱՄՆ դոլար, և 2020թ. նույն ամսվա համեմատ ավելացել 16.4%-ով: Պարտքի աճը պայմանավորված է և՛ ներքին, և՛ արտաքին պարտքի աճով:

Նոյեմբերի դրությամբ պետական կարճաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքը նախորդ ամսվա համեմատ աճել է ևս 0.1 տոկոսային կետով՝ հասնելով 8.9%-ի (տարեսկզբից աճը կազմել է 2.7 տոկոսային կետ), իսկ միջնաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքը հոկտեմբերի համեմատ աճել է 0.2 տոկոսային կետով և տարեսկզբի համեմատ՝ 2.2 տոկոսային կետով:

⁹ Պետական բյուջեի հաշվեկշիռի ցուցանիշները ներկայացված են հունվար-հոկտեմբեր ամիսների տվյալներով, քանի որ հունվար-նոյեմբեր ամիսների ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել:


Գծապատկեր 14. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %



6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ¹⁰

6.1. Գնաճ

Գծապատկեր 15. 12-ամսյա գնաճ, %



Գնաճի տեմպը գրանցում է նոր բարձրակետեր: 12-ամսյա գնաճն ընթացիկ տարվա նոյեմբերին կազմել է 9.6%՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով շուրջ 0.5 տոկոսային կետով: Բարձր գնաճային միջավայրում, գնաճային սպասումները խարսխելու նպատակով, ՀՀ կենտրոնական բանկը դեկտեմբերի սկզբին բարձրացրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը ևս 0.5 տոկոսային կետով՝

¹⁰ Ֆինանսական հատվածի զարգացումների բաժնում ավանդների և վարկերի զարգացումները ներկայացված չեն, քանի որ ՀՀ ԿԲ կողմից նոյեմբեր ամսվա վիճակագրությունը տեղեկանքի պատրաստման պահին հրապարակված չէ:


սահմանելով այն 7.75%: Սակայն, գնաճի՝ թիրախային մակարդակին վերադառնալու միտումը դեռևս նկատելի չէ: Միաժամանակ, տոկոսադրույքի բարձրացումը ուղղակիորեն ազդում է պետական պարտատոմսերի տոկոսադրույքների վրա՝ թանկացնելով կառավարության համար դեֆիցիտի ֆինանսավորումը:

7. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Կորոնավիրուսի 4-րդ ալիքը կարծես թե մեղմվել է: 2021թ. դեկտեմբերին համավարակի նոր գրանցված դեպքերի միջին օրական ցուցանիշը զգալիորեն նվազել է՝ հասնելով 244-ի, իսկ մահվան միջին օրական դեպքերը կազմել են 16՝ նոյեմբերի 41 դեպքի դիմաց: Թեև իրավիճակը բարելավվել է, սակայն օրական 16 մահվան դեպքերի թիվը նույնպես չափազանց բարձր է, և կառավարությունը պետք է ջանքերը չթուլացնի՝ մահվան և նոր հիվանդության դեպքերն ավելի նվազեցնելու համար:

Աշխարհի մյուս երկրների հետ համեմատության մեջ ՀՀ-ում տիրող իրավիճակը փոքր-ինչ բարելավվել է: Մեկ միլիոն բնակչության հաշվով գրանցված դեպքերի թվով դեկտեմբերի 27-ի դրությամբ Հայաստանը զբաղեցնում է աշխարհում 47-րդ տեղը՝ նախորդ ամիս զբաղեցրած 37-րդ տեղի փոխարեն, սակայն մահվան դեպքերի թվով վիճակագրության տեսանկյունից իրավիճակը չի բարելավվել և Հայաստանը շարունակում է զբաղեցնել 16-րդ հորիզոնականը:

Գծապատկեր 16. Կորոնավիրուսի վարակման և մահացության միջին օրական դեպքերը Հայաստանում



* 2021թ. դեկտեմբերի 23-ի դրությամբ

8. ԱՄՓՈՓՈՒՄ

1. Տնտեսության շարժիչ ուժը կրկին դարձել է հանքարդյունաբերությունը: Նոյեմբերին ինչպես տնտեսական ակտիվության ցուցանիշը, այնպես էլ արտահանման տեմպը արագացել են, ինչը հիմնականում պայմանավորված է հանքարդյունաբերության վերականգնմամբ: Ստացվում է, որ տնտեսական ակտիվության տեմպը շարունակում է կախված լինել հանքարդյունահանող կազմակերպությունների գործունեությունից: Տնտեսական ակտիվության արագացման գործում նշանակալի է եղել բազայի էֆեկտի ազդեցությունը, այսինքն՝ նախորդ տարվա նոյեմբերին ՀՀ-ում տիրող բացասական մթնոլորտի պայմաններում ձևավորված ցածր տնտեսական արդյունքի համեմատ, ընթացիկ տարվա նոյեմբերին գրանցվել է աճի արագացում:

2. Գնաճի տեմպը շարունակում է արագանալ: 2021թ. նոյեմբերին 12-ամսյա գնաճը հասել է 9.6%-ի՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 0.5 տոկոսային կետով: Գնաճին մեծ նպաստում ունեն հատկապես առաջին անհրաժեշտության ապրանքների գների աճը (օրինակ՝ մսամթերք, ձու, բանջարեղեն), ինչն ավելի է մեծացնում գնաճի բացասական սոցիալական հետևանքները: Սա այն պայմաններում, երբ ՀՀ ԿԲ-ն տարվա ընթացքում մի քանի անգամ բարձրացրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ գնաճային միջավայրին արձագանքելով, որոնցից վերջինը՝ դեկտեմբերին ևս 0.5 տոկոսային կետով: ԿԲ քաղաքականությունը, սակայն, բավարար չի եղել գնաճի արագացման տեմպը կասեցնելու համար:

3. Հունվար-նոյեմբեր ամիսներին իրական աշխատավարձը նվազել է, քանի որ անվանական աշխատավարձի աճի տեմպը ավելի ցածր է եղել, քան գնաճի տեմպը: Այսպես, միջին գնաճը կազմել է 6.9%, ինչի պատճառով իրական աշխատավարձերը (գնաճով ճշգրտված աշխատավարձերը) նվազել են շուրջ 0.2%-ով: Դա նշանակում է, որ իրական եկամուտները նվազել են, ինչը բացասաբար է ազդել բնակչության կենսամակարդակի վրա:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից **բաղվածքների վերարտադրումը** թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: